ՅԱՒԱԿՅԱԿԱՆ ԱՒԵՏԻՍ ՍԱՆՃԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Սիրելի Աւետիս Սանճեանի ընտանիքին,
Տիկին Հէլէն Սանճեանին եւ զաւակին Կրէկորիին,
Մայր Նազելիին եւ իր զաւակներուն, Արսէնին,
Կարապետին եւ Ցարութիւնին.

Աւետիս Սանճեանի սերունդը յետ Եղեռնի սերունդն է: Անապատի ծաղիկներ, եւ անապատը ծաղկողներ: Սուրիոյ եւ Լիբանանի գաղթականներէն յետոյ, մանուկ Աւետիսը, Սուրբ Երկրի եւ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայրավանքի ծաղկոցին մէջ, հասակ կը նետէ՝ նիհար, բարեձեւ, ուսումնատենչ, ու մարզախաղերու մէջ ճկուն, հանդարտաբարոյ եւ բարեկիրթ: Եւ այդպէս ապրեցաւ եւ աճեցաւ մինչեւ իր կեանքին արեւամուտը: Եւ ծառին բարի պտուղը հեռու չինկաւ իր արմատներէն: Որովհետեւ այդ արմատներուն հողէն, իր ժողովուրդին պատմութեան, մշակոյթին, ստեղծագործ հոգիին ու զաւակներուն արգասիքովը սընաւ, դաստիարակուեցաւ, եւ անոնցմէ աւանդ թողուած հոգեւոր, իմացական եւ ազգային ժառանգութեանց անդաստանին մէջ, գտաւ վայելքը ի՛ր իսկ անձնական կեանքին եւ աճումին, ինչպէս նաեւ իր ընկերային եւ միջազգային յարաբերութեանց եւ ծառայութեանց երախտիքը եւ գոհունակութիւնը:

Իր անունով հրատարակուած գործերը երաշխիքն են այս իրողութեան:

Սանճեան ընտանիքին հետ, հայ մշակոյթի անդաստանին մէջ ծառայող բոլոր կրթականուէր սպասաւորները եւ տաղանդաշատ զաւակները, իրենց կսկիծը եւ մահուան պատճառած ցաւը կ'ամոքեն, շնորհակալութիւն յայտնելով Աստուծոյ՝ իր պարգեւած այս զաւակին, եւ ընտանիքի հայր, եղբայր, գրչեղբայր եւ հայրենանուէր բարեկամ Աւետիս Սանճեանին կեանքին եւ օրինակելի տիպարին համար:

Ան արդարեւ եղաւ անապատի ծաղիկներէն եւ անապատը ծաղկողներէն:

Օրհնեալ լինի իր յիշատակը:

26 Յուլիս 1995

Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Հայ Պատրիարք Երուսաղէմի

digitised by A.R.A.R.@